Տաճկաց, որ ի վերայ Ֆռանկին պատերազմ, և Ղա-
փուտանն էր (պարապ)։

ԻԳ-ին օր Շաբաթ. Մեհրին մեռաւ՝ քոյր մեր Ծա-
ռուկին։ Եւ աւուրքս պատրաստութիւն տեսանէին
երթալոյ Հոգևորտիրին։

ԻԶ-իս օր Գշի. ձայնեաց յամէն եկեղեցոյ ղնչա-
նաւոր արսն և յեկեղեցին Սուրբ Նիկողոսու նստեալ
յետ ժամուն ի յաթոռ, քարոզ և խրատ ասացեալ և
պատուէր բազում, և ևս ասաց թէ Դ սուր կայր ի
վերայ սրտիս. մէկ՝ այն այրեալ եկեղեցին Սուրբ
Սարգիս, որ հնար չեղաւ շինութեան և չտեսի աչօք
իմովք զշինութիւնն. և մէկ՝ այն խաչն ի կենաց Փայ-
տէն և մեռոնն, զոր ի մի տաճկի քովն գրաւ են ե-
դեալ. և մէկ այն՝ որ ի քաղաքիս մէջն ներսեցի եւ
դրսեցի չասէք ժողովրդականքդ. և մէկ՝ այն աղջիկն,
որ աւելի եղև տարի մի որ ի բանտին է վասն հա-
ւատոյն և ոչ եղև հնար փրկութեան։ Երկու սուրն
ելաւ ի սրտէս և երկուքն մնաց. խաչն և մեռոնն հա-
նեցաք. զներսեցին և զդրսեցին այլ խնդրեմ ի ձե-
զանէ որ չի յիշէք. բայց երկու սուրն մնաց ի սրտիս.
միթէ և նոցա Տէրն ողորմեսցի։ Այլ ևս զգանձանակն
յիշեաց թէ Հաստատուն լիցի. և զառաջնորդն ձեր
Յովանէս վարդապետն ձեզ մի տարի առաջնորդ լիցի,
եւ յետ տարուն զով որ խնդրէք յինէն, զայն տաց
ձեզ և ուղարկեցից, և դուք հնազանդ գտջիք յամե-
նայնի։ Եւ վասն Հարազատին իմոյ ասաց թէ Եւ զՏէր
Մարտիրոսն Սուրբ Սարգսայ՝ ինձ վէքիլ և աւագերէց
Սուրբ Էջմիածնայ, որպէս զի ի վերայ գանձանակին
լիցի և նորին ձեռամբն հասանիցի ինձ։ Եւ վեց եկե-
ղեցոյ աւագերէց, խորհրդակից մեծամեծ իշխանացն
թէ Զինչ պատահիցի եւ թիկունք եւ օգնական առաջ-
նորդին յամենայն գործս։ Այլ եւս բանս բազում եւ
աւրհնութիւն ետ ամենեցուն եւ քաղաքիս եւ արձա-